ԺԴ՛ ՏԱՐԻ 3721 — (Ն. Տ.) 23 ՅՈՒԼԻՍ 1896 — 11 ՅՈՒԼԻՍ 1896 — 14 ՍԷՖԷՐ 1314 — ՀԻՆԳՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ՅԵՏ ԳՐՈՒԹԻՒՆ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليه‌ده غلطه‌ده آره‌وك غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
### Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | |
|---|---|---|
| Կ. Պոլսոյ համար Տարեկան | դահեկան արժաք | 150 |
| » » Վեցամսեայ | » » | 75 |
| » » Եռամսեայ | » » | 40 |
| Օտար երկիրներէ Տարեկան | Փրանք | 56 |
| » » Վեցամսեայ | » | 28 |
| Ընծիր թուղթի վրայ մասնաւոր ազգր. Տարեկան Օսմ. Ոսկի | | 2 |
| Գաւառաց թղթատարի ծախքը միօրինակ | Ղրուշ | 50 |

Խմբագրութեան ուղղուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Ընդունելութ. ամէն ազգային ծանուցմանց կ՚ընդունուի
Schiff, Srpek & Comp. à Vienne (Autriche)

## ԷՏՄՈՆ ՏԸ ԿՈՆՔՈՒՐ

Ֆրանսական գրականութիւնը իր վարպետներէն մէկը կորսնցուց յանձին Էտմոն տը Կոնքուրի որուն մահը ծանոյց հեռագիրը քանի մը օր առաջ։ Թէեւ եօթանասունըչորս տարեկան՝ բայց ծերունի վիպասանը կը պահէր իր մտաւոր ու մարմնական կորովը եւ դեռ վերջերս հրատարակեց իր Օրագրութեան իններորդ հատորը։

Արուեստագէտ, քննադատ, թատերական հեղինակ, բայց առաւել վեր ու ամէն բանէ առաջ վիպասան էր Էտմոն տը Կոնքուր, եւ իր մեռած եղբօրը՝ Ժիւլ տը Կոնքուրի աշխատակցութեամբ գրած է հատորներ որոնց համար կրնայ ըսուիլ թէ իրապաշտ դպրոցի ստեղծողն եղան, Զօլաէն, Տօտէէն ու ժամանակակից ուրիշ վիպասաններէ շատ առաջ։ Այդ հատորներուն մէջ նշանաւոր են Ժէրմինի Լասէրթէօ, Ռընէ Մօբրէն, Մանէթ Սալօմոն եւ Մատամ Ժէրվէզէ։

Տասը տարուան մէջ, երկու եղբայրները՝ մտքով, սրտով ու գրչով անբաժան՝ հրատարակեցին աւելի քան քսան հատոր, գրեթէ ճգնաւորական առանձնութեան մը մէջ որ կընդհատուէր միայն ուղեւորութիւններով։ Իրենց աշխատակցութիւնը կը սկսի 1851ին պզտիկ վէպով մը որ աննշմարելի անցաւ. յետոյ, ինքզինքնին տուին ԺԸ դարու գեղարուեստներու, կնոջական դէմ-

[…]

որ համակ գրականութեան նուիրուած, որուն համար ապրած է. գրականութիւնը եղած է իր տարփանքը, իր հաւատքը, իր գերագոյն նպատակակէտը։ Ոչ մէկ արուեստագէտ իրեն չափ հաւատքով, եռանդով, յարատեւութեամբ փարած կրնայ ըլլալ իր գործին. իր յատկանշական բնաւորութիւնն էր ամբոխին գնահատման ու դրական վաղանցիկ փառքերու չըղձալ. իր գաղափարներուն նրբութեամբը, ոճին բարձրութեամբը, մտածումներուն ու դիտողութիւններուն «աղնուապետական» ձեւովը, կրնայ կարելի է այսպէս ըսել, երբեք թերնամու չեղաւ ժողովրդականութեան։ Իր գիրքերը ամէն խաւերու մէջ չէին տարածուեր ու ամէն մարդու ձեռք չէին գտնուեր։

Իր ուսումնասիրութիւնները, ինչպէս ըսինք, կը վերաբերէին նախորդ դարուն. իր վէպերուն նախասիրական հերոսուհիներն էին ցափ կիներն ու դերասանուհիները. այնքա՛ն խորազնին աչքով կը դիտէր մանրամասնութիւնները, որ ամբողջութիւնները, մարդկային մեծ շարժումները չէր տեսներ. իր

[…]

## ԳԱՒԱՌԱՑԻ ԳՐՈՂՆԵՐ

Բ.

[…]

ցի գրողներու կարգին մէջ կրնայինք դասել. քանի որ՝ եթէ չենք սխալիր, գաւառացի է, բայց անոր գրուածքները չափազանց նոր են եւ հարկ կ՚ըլլայ զինք աւելի նոր գրիչներու դասակարգին մէջ դնել։ Բայց գոնէ կրնանք յուսալ՝ որ գէթ երբ գաւառական պատկերներ գրէ՝ իր ոճը քիչ մը աւելի տոհմային ընէ։ Ֆանէն, Որբերեանի յօդուածներէն մին որ անցեալները Արեւելքի մէջ հրատարակուեցաւ, զուտ գիւղական պատկեր մ՚էր որուն լակոնական նախադասութիւններով կտրտուած ոճը քիչ մը օտար էր նիւթին։ Այդ լակոնական ձեւը աւելի վայրկենավէպերու յատուկ է եւ մէկ նորութիւնն է եւրոպական գրականութեան որ մերինին շատ չի յարմարիր։

Արդ՝ ինչպէս կը տեսնուի՝ Պլոսկ կարծեմ թէ քիչ մը չափազանց յոռետես է երբ կը կարծէ թէ «մեր տոհմային գրականութիւնն անհետանալու ախտանիշեր ցոյց կուտայ»։ Ամենեւին։ Ընդհակառակը պէտք է լաւատես ըլլալ։ Որչա՛փ ատեն որ Պոլսոյ գրողներն ու լրագրութիւնը գնահատեն ու քաջալերեն Գէղամի նմանները՝ կրնան ապահով ըլլալ թէ գաւառացի գրողները հետզհետէ գիրար պիտի գերազանցեն եւ անոնց համար […]

[…]

դէր, ուր որ կը դիմէր, կը գանգատէր, մէկն իր տարտին դարման չէր ընէր. եւ տէրտէրն ալ աւելի եւ աւելի կը սրտմտէր անոր դէմ, ու մազի վրայ էր մնացած, որ ժամու բանլիքն ալ առնէր ձեռքէն։ Խաչօն կռահած էր տէրտէրի միտքը, ու կը շշկըռէր, թէ ի՞նչ ընել։ ԳԵՂԱՄ

## ՍԹՐԱԶՊՈՒՐԿԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Անցեալ 1895 դեկտեմբեր 2ին կատարուած վերջնական մարդահամարին արդիւնքը. Սթրազպուրկի բնակչաց թիւն է 135,608, որոնց 71,214ը արական սեռ, եւ 65,394ը իգական սեռ։ Միայն քաղաքի զօրաց թիւն է 15,493։

Դաւանութեանց դալով, 67,755 կաթոլիկ, 63,152 բողոքական, 4098 հրեայ եւ 623 զանազան դաւանութեանց պատկանող։ Գալով ազգայնութեան, 78,035 Ալզաս-Լօռէնցի, 54,281 բնիկ գերման երկրէն եւ 3292 օտարական։

## ՏԻՐԱՑՈՒՆ ՈՒ ԺԱՄԿՈՉԸ

[…]

իրանը, եւ մինակ իրենք չէին, Թօնիրի անբաժան ընկեր ալ խատուտիկ կատուն։ Ախոռը բաժնուած է խրճիթէն հողէ մանր […]



ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի

## ԱԼՖՈՆՍ ՏՕՏԷ

## ՃԻՔ

Սպասելով տիկին տը Պարանսիին որ չէր գար, սեղան նստան. Փեսան կուզէր կընոջը քով նստիլ, բայց Նանդի բոյրը ըսաւ թէ ա՛լ ատանկ բան չիկար, թէ վայելուչ չէր, թէ իրարու դիմաց նստեցնելու էին զանոնք։ Այսպէս ալ եղաւ, բայց երկար բանակռուէ մը ետք որու միջոցին ծերունի Պելիդէր իր նոր հարսին դառնալով, յոյժ անախորժ ձայնով մը հարցուց անոր.

—Դուք ըսէք նայիմ, ի՞նչպէս կընեն, ի՞նչպէս ըրիք Պ. Վիսպէրի հետ։

Այսպէս հարցապնդուելով՝ հացագործ կինը շատ հանդարտօրէն պատասխանեց թէ ինք իր գեղը կարգուած էր ագարակի մը մէջ, եւ թէ նոյն իսկ այդ օրը ինք սեղանին ծառայած էր։ Ծերունիին չարամտութիւնը իր տեղը մնաց. բայց դիւրին էր տեսնել թէ Պելիդէրները գոհ չէին, եւ թէ ճաշին բոլոր շքեղութիւնը չպիտի բա- […]

[…]

ամենքն ալ խմելով միեւնոյն մեծ գաւաթով։

Սակայն այսչափ մտահոգութիւն եւ նեղութիւն չափազանց ցրտութիւն մը դրած էին այս պատրանք-հացկերոյթին սկիզբը։ Նախ հարսը յաղթեց այս ծիծաղելի կացութեան։ Պատուական կինը, որուն միտքը շուտով կը լուսաւորուէր շատ ճիշդ պատճառաբանութեամբ մը, սրտապնդեց ու խօսքը իր դաւկին ուղղելով,

—Մի՛ նեղուիր, տղաս, կ՚ըսէր անոր, մի՛ նեղուիր, ամէն բան կեր։ Սուզի կը նստի մեզ այս սեղանը։

Այս իմաստնալից խօսք իր ազդեցութիւնը ունեցաւ ժողովին վրայ, եւ անմիջապէս ծնօտներու եւ ծիծաղներու ահաւոր ժխոր մը պտուտքեցաւ սեղանին շուրջ, […]

[…]

պիտի տաք ինծի։

Բարձրաձայն կը խնդար, հոլանի բազուկները վեր կը վերցնէր, կերերցնէր ապարանջանները ինքզինքը դիտելով դիմացի հայելիին մէջ, մատներուն ծայրովը ողջոյն մը կը ղրկէր իր դաւկին։ Ցետոյ ոտնաթոռ մը կուզէր, Սելցի ջուր, պաղպաղակ, մէ- […]

